բով եւ չրջապատուած են անառատպատ լեռնէրով: Օլթի վտակն ընդունում է Բարդուղ, Կոծմոր, Փանապկերտ, Փչնկ (Բանակ) եւ Թաւուսկեր (Տայոցքար) առուակները, 100 կիլոմետրից աւելի երկարութիւն ունի մեծ կենդրոնական Օլթի վտակը եւ չատ ընդարձակ աւազան: Օլթի վտակը կազմում է իննևերորդ գաւառը Ճորոխի Աւազանի:

10· Արտվինի գաւառամասում Ճորոխը ձախից-արեւելքից ընդունում է Շաւշէտի վտակը, որ բազկացած է Շաւշէտ, ալաշկոմեան Իմերխեւ եւ ճախակոմեան Արտանուշ առուակներով: Շաւշէտ վտակը 85 վերստ երկարութիւն ունի եւ ընդարձակ աւազան, իր բազմաթիւ վտակներով: Շաւշէտ վտակը առանձներորդ գաւառամասն է Ճորոխի Աւազանի:

11· Օրջոխից մինչեւ Արտվին եւ ապա մինչեւ Խոտիլայի եւ Իրասի գետախառնուրդը, արեւելեան 25 կիլոմետր երկարութեամբ, կազմում է Արտվինի առանձնկերորդ գաւառամասը Ճորոխի Աւազանի:

12· Իրասից Ճորոխը դէպի հիւսիս ուղղուած 15 կիլոմետր անցնելուց յետոյ, ձախից ընդունում է Մուրղուլ վտակը, որ 30 վերստաչափ երկարութիւն ունի եւ ընդարձակ հովիտ: Մուրղուլը կազմում է Ճորոխի առանձնկուերորդ գաւառը:

13· Մուրղուլի խառնուրդից 3–4 կի-